Բնունիս

Բնակչություն՝ 163

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 117 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 13 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1830 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,
Մտել է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի մեջ: Հին Բնունիք գյուղն է, որը 1-ին անգամ հիշատակվում է 906թ., երբ Սյունյաց գահերեց իշխան Սմբատը Տաթևի վանքի կառուցման ավարտի կապակցությամբ, այլ գյուղերի հետ այս գյուղը ևս նվիրում է վանքին: Ըստ հին հարկացուցակի Տաթևի վանքին տալիս էր 6 միավոր հարկ: Հարուստ է պատմական հուշարձաններով:
Պահպանվել է կոթող-հուշարձան՝ նվիրված Մանկիկ Իշխանին: Գյուղի հյուսիս-արևմտյան ծայրի գերեզմանատունը պահպանվել է Օրբելյան իշխանի մահարձանը՝ կանգնեցված 1321թ-ին: Գյուղի շրջակայքում կան մի քանի գյուղատեղիներ և գերեզմանատներ:
Բնունիսում են ծնվել ՍՍՀՄ հերոս Ա. Մանուկյանը, պատմական գիտությունների դոկտոր Ա. Մ. Պողոսյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 59 գյուղացիական տնտեսություն:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3659 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3598 հա, որից՝
- վարելահող՝ 446 հա, խոտհարք՝ 51 հա, արոտ՝ 2153 հա, այլ հողատեսք՝948 հա
- բնակավայրերի հողեր՝ 40 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝2 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 11 հա,
- ջրային հողեր՝ 8հա